

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՋԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. ՀՐԱՋԴԱՆ

Crowe & Asatryan LLC
Sakdurov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryan.am
www.crowe.am
www.asatryan.am

Քրոու Զնդանյան ԼԼԸ
Մախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 5323 23
+ 374 99 54 33 88
Է-մեյլ: general@crowe.am
general@asatryan.am
www.crowe.am
www.asatryan.com

A Member of Crowe Global | A global network of independent accounting and audit firms


Քրոու Զնդանյան ԼԼԸ | Անկախ հաշվապահական և աուդիտորական ընկերությունների գլոբալ անդամ

Վերլուծություն

Հրազդան համայնքի ավագանու 14 դեկտեմբեր 2020թ. 176-Ն որոշմամբ հաստատված 2021 թվականի բյուջեն եկամտային մասով հաստատվել է 2010972.86 հազար դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 3464737.52 հազար դրամ (ճշտված բյուջե): Ընդամենը պլանի նկատմամբ փաստացի կատարողականը կազմել է 2444457.38 հազար դրամ կամ բյուջեն կատարվել է 70.55 %:

Հաշվետու տարում բյուջեի հավաքագրած եկամուտների 51.7 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 48.3 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների հաշվին (Գծապատկեր 1, Աղյուսակ 1):

Գծապատկեր 1



1. Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 109755.691 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 4.49 %-ը: Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի մեջ ներառված՝
 - ✓ հողի հարկի գումարը (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 20557.93 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 0.84 %-ը՝ գերակատարվելով 1557.93 հազար դրամով
 - ✓ գույքահարկ շենք-շինությունների համար (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 45243.821 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 1.85 %-ը՝ գերակատարվելով 2243.82 հազար դրամով
 - ✓ անշարժ գույքի միասնական հարկը կազմել է 43953.94 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 1.80 %-ը՝ թերակատարվելով 32546.06 հազար դրամով:
2. Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 224146.36 հազար դրամով՝ կատարվելով 147.18 %-ով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 9.17 %-ը: Գերակատարման հետևանքով համայնքի բյուջե հավելյալ մուտքագրվել է 71848.26 հազար դրամ:
3. Տեղական տուրքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 37499.27 հազար դրամով՝ կատարվելով 120.89 %-ով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 1.53 %-ը: Գերակատարման հետևանքով համայնքի բյուջե հավելյալ մուտքագրվել է 6479.27 հազար դրամ:
4. Պետական տուրքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 15513.70 հազար դրամով՝ կատարվելով 103.42 %-ով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 0.64 %-ը: Գերակատարման հետևանքով համայնքի բյուջե հավելյալ մուտքագրվել է 513.70 հազար դրամ:
5. Տեղական վճարների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 220213.435 հազար դրամով՝ կատարվելով 99.46 %-ով՝ ապահովելով համայնքի բյուջեի եկամուտների 9.01 %-ը:
6. Պաշտոնական դրամաշնորհների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 1181631.09 հազար դրամով՝ կատարվելով 58 %-ով:
7. Այլ եկամուտների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 60701.31 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 2.48 %-ը: Այլ եկամուտների մեջ ներառված՝

- ✓ գույքի վարձակալությունից եկամուտները կազմել են 31820.10 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 1.3 %-ը՝ թերակատարվելով 4275.43 հազար դրամով
 - ✓ պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 5228.3 հազար դրամը, ամբողջությամբ հատկացվել է որը կազմել է բյուջեի եկամուտների 0.2 %-ը
 - ✓ հենաայուների վարձակալության վճարները կազմել են 6650.3 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 0.3 %-ը՝ թերակատարվելով 2949.7 հազար դրամով
 - ✓ զերեզմանոցների սպասարկման և պահպանման վճարները կազմել են 1834.0 հազար դրամ՝ թերակատարվելով 4766.0 հազար դրամով
 - ✓ տույժերից և տուգանքներից մուտքերը՝ 1085.0 հազար դրամ, թերակատարվել են 705.0 հազար դրամով
 - ✓ համայնքի սեփականություն համարվող հողամասերի սեփականության իրավունքի վկայագրերի պետական գրանցման համար վճարները կազմել են 3276.0 հազար դրամ՝ կազմելով բյուջեի եկամուտների 0.1 %-ը
 - ✓ այլ եկամուտները կազմել են 10807.61 հազար դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 0.44 %-ը:
8. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 253510.16 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 10.4 %-ը՝ կատարվելով 79.77 %-ով:
9. Բյուջեի 2021 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 341486.36 հազար դրամ, որից 330423.98 հազար դրամը վարչական բյուջեի, իսկ 11062.38 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեի ազատ մնացորդն է:


Աղյուսակ 1-ում կատարված եկամուտների թվային վերլուծությունից պարզ է դառնում, որ եկամուտների հավաքագրումը թերակատարված է «Պաշտոնական դրամաշնորհներ» և «Այլ եկամուտներ» հոդվածներում:

«Պաշտոնական դրամաշնորհներ» մասով թերակատարումը պայմանավորված է ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման կարգով տրամադրվող կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) տրամադրման

ուշացումով, իսկ «Այլ եկամուտներ» մասով թերակատարումը պայմանավորված է «Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» հոդվածով պլանավորված, սակայն համայնքի բյուջե 138000.0 հազար դրամ չմուտքագրմամբ:

2021 թվականի բյուջեն ծախսային մասով հաստատվել է 2010972.86 հազար դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 3464737.52 հազար դրամ (ճշտված բյուջե): Փաստացի կատարողականը կազմել է 2367453.5 հազար դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 68.33 % կամ նախատեսված ծախսերից պակաս է կատարվել 1097284.0 հազար դրամ (Գծապատկերներ 2, 3, Աղյուսակներ 2, 3):

Գծապատկեր 2




Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին է հատկացվել ընթացիկ ծախսերի 14.32 %-ը, որը կազմում է 339032.49 հազար դրամ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը (եներգետիկ ծառայություն, կոմունալ ծառայություն, կապի

ծառայություն, ապահովագրական ծախսեր, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռքբերում, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, նյութերի ձեռքբերում) հատկացվել է 180514.41 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 7.62 %-ը, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին սուբսիդիաների տեսքով հատկացվել է բյուջեի եկամուտների 28.98 %-ը, որը կազմում է 686192.53 հազար դրամ, որպես դրամաշնորհ՝ հատկացվել է 56338.58 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 2.38 %-ը: Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացվել է 16400.0 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 0.69 %-ը, այլ ծախսերին է հատկացվել ընթացիկ ծախսերի 0.67 %-ը՝ 15859.97 հազար դրամ:

Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 45.33 %-ը կամ 1073115.52 հազար դրամ հատկացվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Գծապատկեր 3

2021թ. բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման



Ընդհանուր ծախսերի կատարման իրական պատկերը ստանալու համար վերլուծենք ծախսերն ըստ գործառական դասակարգման:

-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

2021թ. համայնքային բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի ծախսերը կազմել են 259160.42 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 12.26 %-ը: Ոլորտի ծախսերի 86.1 %-ը՝ 223201.96 հազար դրամ, ուղղվել է աշխատակազմի պահպանման ծախսերին, 7.8 %-ը՝ 20082.55 հազար դրամ՝ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման» հիմնարկին, 6.1 %-ը՝ 15875.91 հազար դրամ՝ «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների և հուշարձանների պահպանման, շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

-Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հաշվետու տարում հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն ոլորտին համայնքի բյուջեից 1128.0 հազար դրամ հատկացվել է էլեկտրական շյակների ձեռքբերման նպատակով, որը կազմել է ընդհանուր ծախսերի 0.05 %-ը:

-Տնտեսական հարաբերություններ

Հաշվետու տարում ընդհանուր ծախսերի 20.43 %-ը ուղղվել է համայնքում տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս ոլորտում ներառված ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նախատեսված 317800.91 հազար դրամի դիմաց կազմել է 253510.157 հազար դրամ՝ կատարվելով 79.77 %-ով:

650561.15 հազար դրամ ուղղվել է Հրազդան համայնքում ասֆալտապատման, կանգառների կառուցման, բազալտե եզրաքարերի վերանորոգման աշխատանքներին, որից ասֆալտապատման աշխատանքներին ուղղվել է 593784.02 հազար դրամ, կանգառների կառուցման աշխատանքների համար համայնքի բյուջեից տրամադրվել է 30643.04 հազար դրամ, իսկ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հատկացվել է 16500.09 հազար դրամ, բազալտե եզրաքարերի վերանորոգման աշխատանքների համար՝ 9434.0 հազար դրամ, 200.0 հազար դրամ հատկացվել է քարտեզագրման աշխատանքների համար:

Հրազդան համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների, փողոցների

գծանշման և ճանապարհային նշանների ձեռքբերման համար հատկացվել է 34751.26 հազար դրամ:

- Շրջակա միջավայրի պաշտպանություն

2021թ. շրջակա միջավայրի պաշտպանության համար համայնքի բյուջեից հատկացվել է 336875.87 հազար դրամ, որից 266280.67 հազար դրամը կամ այդ բնագավառի համար հատկացված ծախսերի 78.9 %-ը հատկացվել է «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը և «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանամաքրում» բյուջետային հիմնարկին, իսկ 67000.0 հազար դրամը՝ այդ բնագավառի համար օգտագործվող բազմաֆունկցիոնալ վակուումային մեքենայի ձեռքբերմանը, որից 26800.0 հազար դրամը ֆինանսավորվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: 3595.2 հազար դրամ ուղղվել է թուջե կախարիչով երկաթբետոնե դիտահորի սալերի ձեռքբերմանը: Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտին է հատկացվել ընդհանուր ծախսերի 15.94 %-ը:

- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտին համայնքի 2021թ. բյուջեից հատկացվել է 139744.82 հազար դրամ, որից 41430.69 հազար դրամը կամ այդ բնագավառի համար հատկացված ծախսերի 29.65 %-ը հատկացվել է «Հրազդանքաղույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, իսկ 27023.08 հազար դրամը՝ փողոցների լուսավորության համակարգի պահպանման, շահագործման աշխատանքների կատարմանը և էներգախնայողության ծառայություններին: Փողոցային լուսավորության աշխատանքների համար հատկացվել է 65559.99 հազար դրամ, որից 37895.0 հազար դրամը տրամադրվել է համայնքի բյուջեից, որից 9480.0 հազար դրամ հատկացվել է այդ բնագավառի համար վարչական սարքավորումների ձեռքբերմանը, իսկ 27664.99 հազար դրամը ֆինանսավորվել է սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: 5731.05 հազար դրամ հատկացվել է Հրազդան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների համար թիթեղի և իզոգամի ձեռքբերմանը: Այս բնագավառին ուղղվել է ընդհանուր ծախսերի 6.61 %-ը:

- Հանգիստ, մշակույթ և կրոն

2021թ. այս ոլորտին է հատկացվել տարեկան ծախսերի 6.1 %-ը՝ 128890.39 հազար դրամ: Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտին հատկացված միջոցներից խաղահրապարակների

կառուցման աշխատանքներին հատկացվել է 66806.0 հազար դրամ, որից 19323.0 հազար դրամը՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, 59594.39 հազար դրամ հատկացվել է «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն», «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, 2490.0 հազար դրամը՝ հասարակական կազմակերպություններին:

-Կրթություն

Կրթության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 37.78 %-ը՝ 798730.35 հազար դրամ: Համայնքում գործող 12 մանկապարտեզների պահպանմանը և կապիտալ վերանորոգման աշխատանքներին է հատկացվել ոլորտի համար նախատեսված գումարի 69.53 %-ը՝ 555352.09 հազար դրամ, որից 131309.94 հազար դրամը հատկացվել է կապիտալ ծախսերի կատարմանը՝ 50574.54 հազար դրամ սուբվենցիոն մասնաբաժնով: Արտադպրոցական հիմնարկների պահպանմանն է հատկացվել այդ ոլորտի համար նախատեսված գումարի 30.47 %-ը՝ 243378.26 հազար դրամ, որից կապիտալ վերանորոգման աշխատանքներին է հատկացվել 63814.02 հազար դրամ՝ 23826.99 հազար դրամ սուբվենցիոն մասնաբաժնով:

-Մոցիալական պաշտպանություն

2021թ. սոցիալական պաշտպանության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 0.83 %-ը, որի հիմնական ողողությունը բնակչությանը տրամադրվող նպաստներն ու օգնություններն են, որը հաշվետու տարում կազմել է 17611.253 հազար դրամ:

Աղյուսակ 3-ում կատարված ծախսերի թվային վերլուծությունից պարզ է դառնում, որ «Տնտեսական հարաբերություններ»-ում առկա է թերաձախս՝ պայմանավորված այն հանգամանքով, որ համայնքում կատարված խոշորածավալ ասֆալտապատման աշխատանքների դիմաց պետության կողմից համաֆինանսավորման կարգով տրամադրվելիք սուբվենցիաների հաշվին դեռևս չեն կատարվել համապատասխան վճարումներ կապալառու կազմակերպություններին, սակայն ծախսերը հաշվեկրվել են և կրեդիտորական պարտքերը կվճարվեն համապատասխան սուբվենցիոն հատկացումների պարագայում:

Համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման նպատակով վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային բյուջե է հատկացվել 311937.62 հազար դրամ:

2020-2021թթ. եկամուտների և ծախսերի տարեկան ճշտված պլանների և փաստացի կատարողականների համեմատականները ներկայացված են աղյուսակներ 1, 2, 3-ում.

2020, 2021թթ. բյուջեների եկամուտների տարեկան ճշտված պլանների և փաստացի կատարողականների համեմատական

Տող	Եկամտատեսակներ	2020թ.		2021թ.		Աճ կամ նվազում 2020թ.-ի համեմատ		2021թ. կատարողական	
		տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	+գերակատ./-թերակատ.	%
	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	255,328.3	288,741.4	290,798.1	333,902.1	35,469.9	45,160.6	43,104.0	114.8
1110	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	89,500.0	90,612.7	43,000.0	45,243.8	-46,500.0	-45,368.8	2,243.8	105.2
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	49,000.0	49,682.5	19,000.0	20,557.9	-30,000.0	-29,124.5	1,557.9	108.2
1120	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	116,828.3	148,446.3	152,298.1	224,146.4	35,469.9	75,700.1	71,848.3	147.2
1113	Անշարժ գույքի միասնական հարկ			76,500.0	43,953.9			-32,546.1	57.5
	Տուրքեր, այդ թվում՝	41,089.5	36,200.9	46,020.0	53,013.0	4,930.5	16,812.1	6,993.0	115.2
1131	Տեղական տուրքեր	29,760.0	27,631.9	31,020.0	37,499.3	1,260.0	9,867.4	6,479.3	120.9
1151	Պետական տուրքեր	11,329.5	8,569.0	15,000.0	15,513.7	3,670.5	6,944.7	513.7	103.4
	Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	1,039,123.0	1,027,522.9	2,035,886.7	1,181,309.8	996,763.8	153,786.9	-854,576.9	58.0
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող	878,068.4	878,202.8	973,864.9	973,864.9	95,796.5	95,662.1	0.0	100.0
1257	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	15,402.3	14,742.3	6,966.5	6,560.9	-8,435.8	-8,181.4	-405.6	94.2
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	145,652.3	134,577.8	1,055,055.4	195,569.4	909,403.1	60,991.6	-859,486.0	18.5
	Այլ եկամուտներ, այդ թվում՝	190,534.3	175,255.7	432,745.4	281,236.0	242,211.1	105,980.3	-151,509.4	65.0

Տող	Եկամատուցողներ	2020թ.		2021թ.		Աճ կամ նվազում 2020թ.-ի համեմատ			2021թ. կատարողական	
		տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	+զերակատ./-թերակատ.	%	
1330	Գույքի վարձակալությունից եկամուտներ	30,010.0	30,614.7	36,095.1	31,820.1	6,085.1	1,205.4	-4,275.0	88.2	
1340	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	16,150.0	14,478.6	85,701.5	82,505.5	69,551.5	68,026.9	-3,196.0	96.3	
1344	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող մեծածախ	5,474.3	5,126.8	5,228.3	5,228.3	-246.0	101.6	0.0	100.0	
1350	Վարչական գանձումներ	130,700.0	113,867.2	135,700.0	137,708.0	5,000.0	23,840.8	2,008.0	101.5	
1390	Այլ եկամուտներ	8,200.0	11,168.4	168,230.5	23,974.2	160,030.5	12,805.8	-144,256.3	14.3	
6000	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	165,000.0	117,424.7	317,800.9	253,510.2	152,800.9	136,085.4	-64,290.8	79.8	
8100	Տարեկապի ազատ մնացորդ	111,250.6	126,528.1	341,486.4	341,486.4	230,235.8	214,958.3			
	Ընդամենը	1,802,325.6	1,771,673.7	3,464,737.5	2,444,457.4	1,662,411.9	672,783.7	-1,020,280.1	70.6	

2020, 2021 թթ. բյուջեների տնտեսագիտական դասակարգումը ծախսերի տարեկան ճշտված պլանների և փաստացի կատարողականների համեմատական

Տող	Ծախսատեսակներ	2020թ.		2021թ.		Աճ կամ նվազում 2020թ.-ի համեմատ		2021թ. կատարողական	
		տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	+գերակատ./-թերակատ.	%
4050	Ընթացիկ ծախսեր՝ այդ թվում՝	1,401,422.8	1,083,708.2	1,431,881.2	1,294,338.0	30,458.5	210,629.8	-137,543.2	90.4
4100	Աշխատանքի վարձատրություն	345,475.1	306,070.7	349,720.2	339,032.5	4,245.2	32,961.8	-10,687.8	96.9
4200	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	240,309.1	174,773.0	223,559.1	180,514.4	-16,749.9	5,741.4	-43,044.7	80.7
4400	Սուբսիդիաներ	646,145.1	525,287.8	754,069.8	686,192.5	107,924.7	160,904.7	-67,877.3	91.0
4500	Դրամաշնորհներ	76,915.0	43,526.0	60,638.0	56,338.6	-16,277.0	12,812.5	-4,299.4	92.9
4600	Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	40,650.0	24,885.2	20,464.9	16,400.0	-20,185.1	-8,485.2	-4,064.9	80.1
4700	Այլ ծախսեր	51,928.6	9,165.4	23,429.2	15,860.0	-28,499.4	6,694.6	-7,569.2	67.7
5000	Իջ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	400,902.8	346,479.1	2,032,856.3	1,073,115.5	1,631,953.5	726,636.4	-959,740.8	52.8
	Ընդամենը	1,802,325.6	1,430,187.3	3,464,737.5	2,367,453.5	1,662,412.0	937,266.2	-1,097,284.0	68.3

2020, 2021 թթ. բյուջեների գործառական դասակարգմամբ ծախսերի տարեկան ճշտված պլանների և փաստացի կատարողականների համեմատականի վերաբերյալ

Տող	Ծախսատեսակներ	2020թ.		2021թ.		Աճ կամ նվազում 2020թ.-ի համեմատ		2021թ. կատարողական	
		տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	տարեկան ճշտված պլան	փաստացի	+/- գերակա/ - թերակա	%
2100	Շրջանառական ծախսերի համարային ծախսեր	328,634.0	232,001.2	300,514.8	259,160.4	-28,119.2	27,159.3	-41,354.4	86.2
2200	Պաշտպանություն	3,400.0	898.2	4,300.0	0.0	900.0	-898.2	-4,300.0	0.0
2300	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական	2,300.0	0.0	2,628.0	1,128.0	328.0	1,128.0	-1,500.0	42.9
2400	Տնտեսական հարաբերություններ	266,318.2	238,950.8	1,603,169.6	685,312.4	1,336,851.4	446,361.6	-917,857.2	42.7
2500	Երջակա միջավայրի պաշտպանություն	243,526.0	226,615.2	339,725.7	336,875.9	96,199.7	110,260.7	-2,849.8	99.2
2600	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծախսեր	200,666.4	179,720.2	157,780.0	139,744.8	-42,886.4	-39,975.4	-18,035.2	88.6
2700	Առողջապահություն	300.0	115.0	300.0	0.0	0.0	-115.0	-300.0	0.0
2800	Հանգիստ, մշակույթ և կրթություն	82,590.1	42,415.4	135,151.0	128,890.4	52,560.9	86,475.0	-6,260.6	95.4
2900	Կրթություն	611,748.1	483,925.1	896,244.8	798,730.4	284,496.7	314,805.2	-97,514.4	89.1
3000	Մրցիական պաշտպանություն	32,803.2	25,546.3	21,410.5	17,611.3	-11,392.7	-7,935.1	-3,799.2	82.3
3100	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդ	30,039.6	0.0	3,513.2	0.0	-26,526.4	0.0	-3,513.2	0.0
	Ընդամենը	1,802,325.6	1,430,187.3	3,464,737.5	2,367,453.5	1,662,412.0	937,266.2	-1,097,284.0	68.3


Եզրակացություն

Աուդիտորական առաջադրանքի շրջանակում իրականացվել է ֆինանսական աուդիտ, որի նպատակն է գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին և այլ օրենսդրության պահանջներին:

Բյուջեի տարեկան կատարման մասին հաշվետվության համար հիմք են հանդիսացել 2021թ. համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ, համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների հաշվետվությունները:

Մեր կարծիքով վերոնշյալ հաշվետվությունները կազմված են «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքների, ֆինանսների և եկոնոմիկայի նախարարի 9 հունվարի 2007 թ. N 5-Ն հրամանի պահանջներին համապատասխան և բոլոր առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկեր 2021թ. եկամուտների և ծախսերի վերաբերյալ:

«Քրոու ընդ Ասատրյան» ՍՊԸ տնօրեն



Ա. Ասատրյան

Ներքին աուդիտի ծառայության ղեկավար

Ա. Թորոսյան

Ներքին աուդիտորներ



Վ. Գյուրջյան



Ա. Բադալյան

